Հաշվետվություն

Ես՝ Բաբկեն Մկրտչի Գաբրիելյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչությունում (այսուհետ՝ Վարչություն) որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում (22.04.2024-21.10.2024թթ.) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Խմբի կազմում շարունակել եմ մասնակցել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում իրականացվող ուսումնասիրության աշխատանքներին, մասնավորապես՝ ուսումնասիրել եմ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների նախագծա - նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ - նախահաշիվները և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:
2. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում գործուղվել եմ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք, որտեղ ուսումնասիրել եմ թվով 2 գնման ընթացակարգերի շրջանակներում մանկապարտեզների վերանորոգման նախագծա - նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ - նախահաշիվները և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:
3. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում գործուղվել եմ ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս և Չիվա բնակավայրեր, որտեղ ուսումնասիրել եմ թվով 2 գնման ընթացակարգերի շրջանակներում կառուցված դպրոցների նախագծա - նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ - նախահաշիվները և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:
4. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում գործուղվել եմ ՀՀ Տավուշի մարզ որտեղ ուսումնասիրել «ՀՀ Տավուշի մարզի Ենոքավան գյուղից դեպի «Ապագա Տուր» հյուրանոցային համալիր տանող ճանապարհի նախագծա - նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ - նախահաշիվները և կատարել հսկիչ չափագրումներ:
5. Աջակցել եմ Վարչության գործառույթների շրջանակում իրականացվող աշխատանքներին և կատարել անմիջական ղեկավարի այլ հանձնարարականներ:

ՀՀ ՊՎԾ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության

վարչության փորձագետ՝ Բաբկեն Գաբրիելյան

21.10.2024թ.